

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2014-3-2-Ա

ք. Երևան

29.04.2014թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2014 թվականի ապրիլի 29-ի նիստում քննարկեց 2014 թվականի հունվարի 24-ին «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ARARTUNI ԱՐԱՐՏՈՒՆԻ ԱՓԱՐԿՈՒՄ» (հայտ №20130927) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի, 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 107-րդ կետի 3-րդ, 8-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան ՀՀ-ում գրանցման հիման վրա պահպանվող և հանրահայտ ապրանքային նշան ճանաչված «ARARAT», «ԱՐԱՐԱՏ», «ԱՐԱՐԱՏ (ռու.)» («Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ, N 19267, N 17139, N 17133, N 3182) շփոթելու աստիճան նման ապրանքային նշանների առկայության պատճառով: Կարգի 111-րդ կետի համաձայն՝ ապրանքային նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճանի նման, եթե այն ընդհանուր առմամբ

զուգորդվում է դրա հետ (այսինքն մարդու (միջին սպառողի) մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն), չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ընդ որում, նշանները համարվում են ընդհանուր առմամբ զուգորդվող, եթե տվյալ նշանների հիմնական տարրերը կամ մասը համընկնում կամ կատարված են այնպես, որ տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ առաջանում է պատկերացում մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որին ինքն արդեն առնչվել է (ճանաչում է, իրեն հայտնի է): Տվյալ դեպքում հայտարկված «ARARTUNI ԱՐԱՐՏՈՒՆԻ ԱՐԱՐՏՈՒՆԻ (ռու.)» ապրանքային նշանը իր սկզբնտառերով ընդհանուր առմամբ զուգորդվում է «ԱՐԱՐԱՏ», «ARARAT», «ԱՐԱՐԱՏ (ռու.)» հանրահայտ ապրանքային նշանների հետ և կարող է շփոթություն առաջացնել միջին սպառողի շրջանակներում: Ապրանքային նշանի ճանաչելու հարցում ամենաէական ու կարևորը նշանների սկզբնական տառերը կամ տառակապակցություններն են հանդիսանում, որն էլ կարող է շփոթություն առաջացնել միջին սպառողի շրջանակներում:

Կոլեգիայի անդամները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեցին բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակիորեն բավարարելու և կրկնական փորձաքննության որոշումը մասնակիորեն չեղյալ ճանաչելու վերաբերյալ և ապրանքային նշանի վկայագիր տալու մասին գինի ապրանքի համար:

Բողոքարկողի ներկայացուցիչը կրկնեց բողոքում բերված իր խնդրանքը հնարավորության դեպքում գրանցել ապրանքային նշանը 33-րդ դասի բոլոր ապրանքների համար:

Փորձաքննության բաժնի պետը պնդեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման հայտում նշված բոլոր ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի մյուս անդամներն առաջարկեցին ապրանքային նշանը գրանցել ակոհոլային խմիչքների, բացառությամբ գարեջրի, բրենդիի, կոնյակի և հայկական կոնյակի ապրանքների համար:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ARARTUNI ԱՐԱՐՏՈՒՆԻ ԱՓԱՐԿՈՒՄ» (հայտ №20130927) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մասնակիորեն, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչել մասնակիորեն և ապրանքային նշանի վկայագիր տալ 33-րդ դասի հետևյալ ապրանքների համար՝ ալկոհոլային խմիչքներ, բացառությամբ գարեջրի, բրենդիի, կոնյակի և հայկական կոնյակի:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ